# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

«05» 10 2018թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: հեռ. (0312) 3-26-10

Ուղերձ ուսուցչի օրվա կապակցությամբ

Հարգելի՛ ուսուցիչներ

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի՝ ուսուցչի օրվա կապակցությամբ:

Ուսուցչի մասնագիտությունը հայ ազգի համար միշտ եղել և կմնա ամենահարգված մասնագիտություններից մեկը: Դարեր շարունակ հավատարիմ մնալով այդ պատվավոր առաքելությանը, Ձեր ուսերին եք կրում մեր զավակների կրթության ու դաստիարակության հայրենանվեր գործը:

Այն լուսավորն ու գեղեցիկը, հավատի և բարու այն սերմերը, որ սերմանում եք Ձեր սաների հոգիներում, ուժ են տալիս նրանց չընկճվելու դժվարություններից, գնահատելու և հավատալու մեր երկրի լուսավոր ապագային:

Շիրակի մարզի դպրոցականների հաջողությունները խոսում են մեր ուսուցչական բարձրորակ կադրերի, կրթադաստիարակչական ավանդույթների ու նաև կրթական համակարգը արդի դպրոցին ներկայացվող պահանջներին համապատասխանեցնելու մասին:

Սակայն գիտակցում ենք նաև, որ դեռ շատ անելիքներ կան կրթական համակարգի բարեփոխումների ուղղությամբ, որպեսզի իսկապես ունենանք բարձրակարգ, ժամանակակից, որակյալ կրթական համակարգ:

Ձեր մանկավարժական գործունեությամբ, նաև անձնական օրինակով ու նվիրումով է ուրվագծվում նորօրյա հայ մարդու նկարագիրը:

Սիրելի՛ ուսուցիչներ, մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք, անսահման երջանկություն, նվիրում ու սեր՝ Ձեր նվիրյալ աշխատանքի ճանապարհին:

Կ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ